արժէքը, իբրև վաւերական անմիջական նիւթեր պատմութեան համար։ Այդպիսին է այն մասը, որ վերաբերում է Նադիրից սկսած մինչև Քերիմ խանի ժամանակամիջոցին։

Մանաւանդ վերջինիս շրջանը։ Այս մասում արդէն հեղինակի լեզուն ի հարկէ աւելի բնական ոճ է ընդունում, և գրածը կարդացւում է հետաքրքրութեամբ։ Քերիմ խանի պատմութիւնը սիրով և մանրամասնաբար գրելով, հեղինակը ինքը չի զգում այս նշանաւոր վայրկեանի խոշոր և բնորոշ կերպարանքը. ինչպէս յայտնի է, ի դէմս Քերիմ խանի, մի հասարակ ծագումով շիրազեցու, բուն պարսիկ ցեղը մի փորձ արեց վերածնութեան և նրա մահով նորից ընկղմուեց լեթարգիական քնի մէջ, դառնալով նորից ստրուկ՝ Թաթար-Թիւրքական տիրապետութեան, շնորհիւ կրօնական միութեան, առանց գիտակցելու այդ դրութիւնը։

Զնայելով, որ պարսիկ ցեղի տիրապետութիւնը՝ ի դէմս Քերիմ խանի և նրա սերնդեակների, կարճ ժամանակ տևեց, և այն էլ իբրև անընդհատ մաքառում Թիւրք-Թաթար խաների, այնուհանդերձ ցեղային տարբերութիւնը արիացիների և Թաթարների ակներև և զգալի կերպով ընդգծւում է. սկսւում է երևան գալ կառավարութեան կողմից մարդկայնական յարաբերութիւն դէպի ստորադրեալ ժողովուրդը և դէպի պատերազմող-հակառակորդը—բուն արիական յատկանիշներ։ Անշուշտ եթէ և իցէ Իրանը դառնալու է իսկական պարսկական պետութիւն։ Եւ առանց կասկածելու կարելի է ասել, որ այն ժամանակ քաղաքակրթութիւնը նրանում չի ընթանալու կրիայի քայլերով, ինչպէս Թիւրքիայում։ Բայց մօտ է թէ հեռու այդ օրը—դեռ նշաններ չկան ։ Քերիմ խանի շրջանը մի անգիտակցական կայծ էր, որ արագ մարեց և Իրանը նորից ընդունեց Թըքական դրոշմը։

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) Հ. Համբարձումեան. «Հպարտ հոգու երգերից», 1905, Պետերբուրգ. 30 կ.։
2) Ե. Ֆրանգեան. «Արհամարհուածները», (արտ. «Մշակ»-ից) 1905, Թաւրիզ, 10 շահի։
3) Ամպրէ. «Տաղեր», 1905, Վաղարշապատ, 10 կ.։
4) Ատրպետ. «Երկերի ժողովածու», Ա հատոր, 1905, Թաւրիզ, 1 ր.։
5) «Անասնապահութիւն և կաթնատնտեսութիւն», կազմեց Գ

Ղազարեան (արտ. «Արարատ» ամսագրից), 1905, Վաղարշապատ, 40 կ.։

6) «Էմինեան Ազգագրական Ժողովածու», Հատոր Դ. Ժողովրդական Հեքիաթ, հաւաքեց Ս. Հայկունի. հրատ. Լազար. Ճեմ. արև. լեզուաց. 1902, Մոսկուա-Վաղարշապատ, 1 ր. 25 կ.։

7) Гр. Чалхушянъ «Армянскій вопросъ, Армянскіе Погромы въ Россіи», (Панисламизмъ), Посв. незаб. Памти. Г. А. Джаншіева, 1905, Ростовъ Н/Д 20 к.

8) Հ. Ս. Էֆրիկեան. «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», հատոր Ա. Վէնեատիկ, 6 ր.։

9) Վահան Տիրացեան. «Մտքեր և մտքեր», 1905, Թիֆլիս, 10 կ.։

10) Ն Ա. Ազբելով. «Կանանց հարցը Եպոնիայում» (պատկերազարդ) Թարգմ. Նունէ Թայիրեան, 1905, Թիֆլիս, 25 կ.։